## 77. ՎԸՐՑԱԿԸՆ ԾԵՆ ՔՑԻԼԸ

*Մին պըռավըւ մին շոն, մինգյել մին վըերցակ ա ինում։ Պա-ռավը տահանց շատ ար չըրչարում։*

*Մին օր էլ վըերցակը նաև շոնը չենա՛ն տո՛ւս ըն կկյամ, կլո՞ւխ յոր օնում, քյինա՛մ։ Շատ ըն քյինամ, թա՛ խոեգյ, մթըեն ա ին-գյո՛ւմ։ Մին ծմակու կոխկըե վըերցակը եր ա ինում մին ծառ, շանն ասում.—Դե, տու կարըել չըս ծառը եր ինիս, մին քոլու տակըե կըշտռ ըրա, լո՛ւսանա, էլլա հըղըե կինինքյ, քյինանք։*

*Վըեր կյամ ա քշերին կեսը, վըերցակը կանչում ա։ Էտ կանչին յիրա՛ մոտըե տըեղա մին աղվըես կլո՛խը պիցըրցնում ա, ա-սում.—Ըհը՛, թա՛գա մըեսն ո՛ւրան վըեննավն ա եկալ։ Քյինամ ա ծառըեն տակըեն պուպուզ կենում, դուդան կլխըլեր անում, վըեր-ցակըեն ասում.—Խեր ինի՞, շենան տո՛ւս եկած հիշտեղ ը՞ս քյի-նամ, վըեր մթըեն ըս ինգյալ, մ՞ացալ ըստըեղ։ Վըերցակն ասում ա.—Օղում ըմ ըստըեղ նոր շեն քցիմ, տրա հետե յըմ եկալ։ Աղ-վըեսը թա՛ պա լա՛վ, վըեր մթըեն ըս ինգյալ, հո՞ր ը՞ս մնացալ ըս-տըեղ, կըկյիր կոշտըս, քշերը քշտիս ղոնաղ կըմնիր, էլլա քըշըլ-հա-նան լո՛ւսա՛վ հըղըե կինիր, քյինիր։ Ետնան էլ թա՛ դե՛, վըեր եք քյի-նանք, քշտիս կըկենաս, էլլա քշերավ եր կըկենաս, քյինաս՝ հիշտըեղ լա՛վ կինի, ընդըեղ շեն քցիս։ Վըերցակն ասում ա.—Դե, ես մենակ*

ըլի՛, էն ա շենին պլան տվող էլ հանե՛, էն քոլըեն տակըեն նստած, քյինա, հըրցրու, տըես ինքյն էլ ա՞ օգում կյա, բիրաղի կըկյանք կոշտըըտ, էլլա ծանքըը ծիքյիլին եր կենանք, քյինանք։

Վըերցակը վըեր խոի յա ասում, աղվըեսը գյուդում ա, թա քոլըեն տակըեն թուխսըկան պեն կա ծըրան ճուտըերավը նստած։ Քյինամ ա, թա փռնըե, շոնը յիրա յա պրծնում, տրա պկան փռնում, ըսկսում խեխտիլը։ Աղվեսը մին թանրան տնևս ա պրծնում, փախնում։ Փըխճիլիս բիդի վըերցակը եշում ա, ասում.—Ըստըեղեքյ վըեր տուք չեն քցիքյ, վըեշ մինն էտ շենումը կենալ չի։